Հայաստանի հանրապետության
Կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 426Ն
28/12/2007

Գրանցման ամսաթիվ՝ 04/02/2008

Հրապարակման ամսաթիվ՝ 15/02/2008

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 75 Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «իգ1» և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի ««Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, թերտեղաբաշխված պարտատոմսերի տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի պահառության գործունեության մասին», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման մասին», «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում շրջանառության», «Պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների մասին» կարգերը հաստատելու մասին» թիվ 75 Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) վերնագրից «թերտեղաբաշխված պարտատոմսերի տեղաբաշխման, » բառերը հանել.
2. Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգը» նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է)»:
3. Որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, թերտեղաբաշխված պարտատոմսերի տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման» կարգը շարադրել նոր խմբագրությամբ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը, բացառությամբ սույն որոշման հավելված 1-ով հաստատված «Հայաստանի

Հանրապետության պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման» կարգի պարտատոմսերի հետգնման աճուրդի գործառույթների իրականացման վերաբերյալ դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում 2008 թվականի սեպտեմբերի 20-ից:

**Հայաստանի Հանրապետության**
**կենտրոնական բանկի նախագահ** **Տիգրան Սարգսյան**

2007 թ. դեկտեմբերի 29
Երևան

**Հավելված 1**

**Կ Ա Ր Գ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՀԵՏԳՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

### ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգը:
2. Սույն կարգում կիրառվող հիմնական հասկացություններն են.

բանկ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

թողարկող՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն.

պետական պարտատոմս (հետագայում՝ պարտատոմս)՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից թողարկվող պետական (գանձապետական) կարճաժամկետ, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր,

ինչպես նաև հետագայում թողարկվող և շրջանառվող պետական այլ պարտատոմսեր, եթե տվյալ տեսակի պարտատոմսի շրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերով սահմանված կլինի, որ սույն կարգը տարածվում է տվյալ պարտատոմսի վրա.

տեղաբաշխման աճուրդ՝ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման նպատակով կազմակերպվող փակ մրցութային գործընթաց, որի ժամանակ պարտատոմս ձեռք բերելու նպատակով պոտենցիալ գնորդ-ները ներկայացնում են հայտեր.

հետգնման աճուրդ՝ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի հետգնման նպատակով կազմակերպվող փակ մրցութային գործընթաց, որի ժամանակ պարտատոմս վաճառելու նպատակով պոտենցիալ վաճառողները ներկայացնում են հայտեր.

պահառու՝ պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունները կրող, պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք. պահառուի գործառույթներն իրականացնում է բանկը.

գործակալ՝ պարտատոմսերի շուկայում գործակալի գործառույթների կատարման մասին պայմանագիր կնքած առևտրային բանկ, վարկային կազմակերպություն, ֆինանսական այլ կազմակերպություն.

դիլեր՝ պարտատոմսերի շուկայում դիլերի գործառույթների կատարման մասին պայմանագիր կնքած առևտրային բանկ, վարկային կազմակերպություն, ֆինանսական այլ կազմակերպություն.

ներդրող՝ յուրաքանչյուր իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը սեփականության իրավունքով ձեռք է բերում պարտատոմսեր և չի հանդիսանում գործակալ(դիլեր). սույն կարգի իմաստով ներդրող է հանդիսանում նաև գործակալը(դիլերը) և գործակալ(դիլեր) չհանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկը, որը սույն կարգի համաձայն պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամանակ պարտատոմսեր է ձեռք բերում կամ հետգնման ժամանակ պարտատոմսեր է վաճառում գործակալի(դիլերի) միջոցով.

գանձապետական պահառու՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր մարմնի կողմից պարտատոմսերի անմիջական վաճառքի, ներդրողներին պատկանող պարտատոմսերի հաշվառման և սպասարկման համակարգ.

աշխատանքային խումբ՝ տեղաբաշխման, հետգնման և հետգնման աճուրդի անցկացման նպատակով թողարկողի և բանկի մեկական ներկայացուցիչներից կազմված խումբ, որի իրավասությունները և կազմը հաստատում է բանկի նախագահը.

էլեկտրոնային հաղորդագրություն՝ բանկի կողմից հաստատված հատուկ ֆորմատներով կազմված էլեկտրոնային ստանդարտացված հաղորդագրություն, որի միջոցով ներկայացվում են աճուրդի հայտերը, դեպո հանձնարարականները, դրանց ընդունման, կատարման, մերժման և այլ հաղորդագրությունները:

## ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Բանկը, որպես Հայաստանի Հանրապետության Կառավարության ֆինանսական գործակալ, հիմք ընդունելով պարտատոմսերի թողարկման վերաբերյալ թողարկողի հրամանը, պետական (գանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի պարագայում՝ նաև տեղաբաշխման աճուրդի կազմակերպման մասին հանձնարարագիրը, կազմակերպում է պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդը:
4. Հայաստանի Հանրապետության պետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի մասնակիցներ են դիլերները, գանձապետական պահառուն: Հայաստանի Հանրապետության պետական միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի մասնակիցներ են գործակալները, դիլերները:
5. Ներդրողները, այդ թվում՝ նաև գոր-ծա-կալ (դիլեր) չհանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերը (այսուհետ՝ գործակալ(դիլեր) չհանդիսացող բանկ), տեղաբաշխման աճուրդին կարող են մասնակցել իրենց հետ պայ-մա-նա-գիր կնքած գործակալի (դիլերի) միջոցով՝ ներկայացնելով նրան պարտատոմսերի ձեռքբերման հայտ: Գործակալը (դիլերը), որը գոր-ծա-կալ (դիլեր) չհանդիսացող բանկի հա-մար տեղաբաշխման աճուրդի ժամանակ ձեռք է բերել պարտատոմսեր, պարտավոր է աճուրդի ավարտից հետո նույն օրվա ընթացքում դրանք փոխանցել պահառուի մոտ վարվող գոր-ծա-կալ (դիլեր) չհանդիսացող բանկի դեպո հաշվի վրա: Դրամական հաշվարկները կատարվում են գործակալ (դիլեր) չհանդիսացող բանկի և գործակալի (դիլերի) միջև կնքված պայմանագրում սահմանված կարգով և ժամկետներում:

Գործակալը(դիլերը) ներդրողի կարգավիճակով կարող է մասնակցել տեղաբաշխման աճուրդին նաև այլ գործակալի (դիլերի) միջոցով՝ համաձայն սույն կետում գործակալ(դիլեր) չհանդիսացող բանկերի համար սահմանված ընթացակարգերի:

6. Տեղաբաշխման աճուրդի մասնակիցները նախորդ աշխատանքային օրվա ժամը 15.00-ից- մինչև աճուրդի օրվա ժամը 10.30-ը ներկայացնում են պարտատոմսերի ձեռքբերման երկու տեսակի հայտ: Առաջին հայտն ընդգրկում է պարտատոմսերի գնման վերաբերյալ աճուրդի մասնակիցների սեփական առաջարկությունները, երկրորդ հայտը՝ ներդրողների ամփոփված առաջարկությունները: Աճուրդի անցկացման օրվա ժամը 10.30-ից հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում:
7. Տեղաբաշխման աճուրդին ներկայացված հայտերն ընդգրկում են մրցակցային և ոչ մրցակցային առաջարկություններ:
   1) Հայաստանի Հանրապետության պետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին ներկայացվող մրցակցային առաջարկության մեջ նշվում է պարտատոմսերի այն ծավալը, որը մասնակիցը ցանկանում է ձեռք բերել աճուրդի ժամանակ և այն գումարը, որով մասնակիցը պատրաստ է ձեռք բերել պարտատոմսերի այդ ծավալը:
   2) Հայաստանի Հանրապետության պետական միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին ներկայացվող մրցակցային առաջարկության մեջ նշվում է պարտատոմսերի այն ծավալը, որը մասնակիցը ցանկանում է ձեռք բերել աճուրդի ժամանակ և այն եկամտաբերությունը, որով մասնակիցը պատրաստ է ձեռք բերել պարտատոմսերի այդ ծավալը:

3) Պարտատոմսերի գնման ծավալները պետք է բազմապատիկ լինեն տվյալ պարտատոմսի համար սահմանված քայլին: Բոլոր գումարները նշվում են մեկ դրամի ճշտությամբ: Հայտերի ոչ մրցակցային առաջարկության մեջ նշվում է այն ծավալը, որի չափով աճուրդի մասնակիցը ցանկանում է պարտատոմսեր ձեռք բերել աճուրդում ձևավորված միջին կշռված եկամտաբերությամբ:

8. Տեղաբաշխման աճուրդին հայտերը ներկայացվում են համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով՝ աճուրդի մասնակցի մոտ տեղակայված ՍիԲիԷյնեթ համակարգի աշխատանքային կայանից. ընդ որում, յուրաքանչյուր տեսակի հայտի համար (սեփական, ներդրողի) կազմվում է առանձին հաղորդագրություն: Աճուրդի նույն մասնակցից երկու միատեսակ հայտ ստանալու դեպքում ընդունվում է պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի (այսուհետև՝ համակարգ) կողմից առաջինը ընդունված հայտը: Համակարգ մուտքագրված հայտը չի կարող հետ կանչվել, և դրանում փոփոխություններ չեն կարող կատարվել:

9. Տեղաբաշխման աճուրդի մասնակիցների հայտերը համակարգ մուտքագրվելու պահին անմիջապես ստուգվում են համակարգի կողմից: Տեղաբաշխման աճուրդի պայմանների և(կամ) առանձին հայտին ներկայացվող սահմանափակումների խախտման դեպքում հայտը մերժվում է, ինչի մասին աճուրդի մասնակիցը տեղեկացվում է համապատասխան էլեկտրոնային հաղորդագրության միջոցով: Հայտը մերժված լինելու դեպքում աճուրդի մասնակիցը կարող է մինչև հայտերի ընդունման համար սահմանված ժամի ավարտը ներկայացնել նոր հայտ:

10. Եթե տեղաբաշխման աճուրդի մասնակիցը իր մոտ տեղակայված ՍիԲիԷյնեթ-ի աշխատանքային կայանից տարբեր տեսակի վթարների հետևանքով (կապի խզում, մասնակցի հսկողության ներքո գործող տեխնիկա-ծրագրային ապահովման անսարքություն, այլ) չունի հայտերը ուղարկելու հնարավորություն կամ նա իր մոտ տեղակայված աշխատանքային կայանից հայտը ուղարկելուց հետո 10 րոպեի ընթացքում չի ստանում ընդունման(մերժման) մասին համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունը, ապա նա այդ մասին տեղեկացնում է բանկի կողմից լիազորված աշխատակիցներին և հայտը (հայտերը) մուտքագրում է բանկում տեղադրված հատուկ աշխատանքային կայանից մինչև ժամը 10.30-ը: Տեղաբաշխման աճուրդի մասնակիցը հատուկ աշխատանքային կայանից հայտը մուտքագրելուց հետո այդ մասին անմիջապես տեղեկացնում է  բանկի կողմից լիազորված աշխատակիցներին:

11. Տեղաբաշխման աճուրդի օրվա ժամը 10.30-ին, համակարգը ավտոմատացված եղանակով դադարեցնում է հայտերի ընդունումը: Մինչև համակարգի կողմից հայտերի ընդունման ավարտը հայտերը չեն կարող դիտարկվել:

12. Եթե աշխատանքային խումբը սույն կարգի 10-րդ կետի համաձայն ստացված տեղեկությունների հիման վրա պարզում է, որ տեղաբաշխման աճուրդի օրվա ժամը 10:20-ի դրությամբ աճուրդի պոտենցիալ մասնակիցների 30%-ը կամ ավելին տեխնիկական պատճառներով չեն կարողացել ներկայացնել հայտեր, ապա աշխատանքային խումբը այդ մասին  անմիջապես տեղեկացնում է թողարկողին: Հաշվի առնելով թողարկողի կողմից ընդունված որոշումը (աճուրդը շարունակել, վերսկսել նույն օրը ավելի ուշ ժամի, տեղափոխել հաջորդ աշխատանքային օր կամ չեղյալ հայտարարել)՝ աշխատանքային խումբը կամ շարունակում է աճուրդային գործընթացը, կամ գործարկում է տեղաբաշխման աճուրդի վերսկսման, տեղափոխման կամ չեղյալ համարելու գործընթացը, որի մասին անմիջապես (բայց ոչ ուշ, քան մինչև աճուրդի օրվա ժամը 11:30-ը) ՍիԲիԷյնեթ համակարգի և/կամ հեռախոսի միջոցով տեղեկացնում է

տեղաբաշխման աճուրդի մասնակիցներին: Աճուրդային գործընթացը շարունակելու դեպքում այն ընթանում է սույն կարգի 13-21-րդ կետերում սահմանված ընթացակարգերի համաձայն: Աճուրդային գործընթացի ընդհատման դեպքում գործում են սույն գլխի 22-րդ կետում սահմանված կանոնները:
13. Հայտերի ընդունման դադարեցման պահից համակարգի կողմից իրականացվում է ընդունված հայտերի ստուգում՝ ըստ թողարկման հրամանով առանձին մասնակցին ներկայացվող պահանջների:
14. Համակարգը ստուգում է աճուրդի մասնակցի դրամական հաշվում բավարար միջոցների առկայությունը՝ հաշվի առնելով նրա համապատասխան հաշվում առկա միջոցների և դեպո հաշվում աճուրդի օրը մարման ենթակա պարտատոմսերի ծավալի հանրագումարը, բացառությամբ գրավադրված և արգելադրված պարտատոմսերի: Համապատասխան միջոցների առկայության դեպքում համակարգն ապահովում է դրանց օգտագործման սահմանափակումը հաշվետիրոջ այլ գործառնությունների համար:
15. Տեղաբաշխման աճուրդի պայմաններից շեղումներով լրացված կամ բավարար միջոցներով չապահովված հայտերն աճուրդից հանվում են (մերժվում են), իսկ աճուրդի համապատասխան մասնակիցներն այդ մասին տեղեկացվում են համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով:
16. Ընդունված (չմերժված) հայտերի հիման վրա կազմվում է հավաքական տեղեկագիր՝ համաձայն ձև 3-ի: Աշխատանքային խմբի կողմից վավերացված հավաքական տեղեկագիրը մինչև ժամը 11.00-ը տրամադրվում է թողարկողին ՍիԲիԷյնեթ համակարգի միջոցով, իսկ ՍիԲիԷյնեթ համակարգի խափանման դեպքում՝ թղթային եղանակով:
17. Ոչ ուշ, քան թողարկման աճուրդի անցկացման օրվա ժամը 12.00-ը, թողարկողը որոշում է պարտատոմսերի տեղաբաշխման սահմանային եկամտաբերությունը և միջին կշռված տարեկան եկամտաբերությունը՝ որոնց արժեքները կլորացվում են ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ, որից հետո թողարկողի հանձնարարագրի հիման վրա, կազմված համաձայն ձև 4-ի, սույն կետով նշված չափանիշները մուտքագրվում են համակարգ: Թողարկողի հանձնարարագիրը բանկին է փոխանցվում ՍիԲիԷյնեթ համակարգի միջոցով, իսկ ՍիԲիԷյնեթ համակարգի խափանման դեպքում՝ թղթային եղանակով:
18. Սույն կարգի 17-րդ կետում նշված չափանիշները համակարգ մուտքագրվելուց հետո սկսվում է առաջարկությունների բավարարումը: Տեղաբաշխման աճուրդին գանձապետական պահառուի մասնակցելու պարագայում առաջինը բավարարվում է գանձապետական պահառուի կողմից ներկայացված հայտը՝ թողարկման հրամանում նշված սահմաններում, այնուհետև՝ մնացած մասնակիցների կողմից ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունները՝ թողարկման հրամանում սահմանված սահմաններում (պետական կարճաժամկետ պարտատոմսերի պարագայում դիլերների կողմից ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունների գումարային ծավալը բավարարվում է թողարկման ծավալի 20%-ի սահմաններում, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի պարագայում գործակալների կողմից ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունների գումարային ծավալը բավարարվում է այդ օրը տեղաբաշխման ենթակա ծավալի 20%-ի սահմաններում): Եթե մասնակիցների կողմից ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունների գումարային ծավալն ավելին է, ապա այդ առաջարկությունները բավարարվում են համամասնորեն՝ 20%-ի սահմաններում: Ոչ մրցակցային առաջարկությունների

բավարարումից հետո սկսվում է մրցակցային առաջարկությունների բավարարումն ամենացածր եկամտաբերությամբ առաջարկություններից սկսած մինչև սահմանային եկամտաբերությամբ որոշված ծավալը: Եթե սահմանային եկամտաբերությամբ բավարարման ենթակա պարտատոմսերի ծավալը զիջում է տվյալ եկամտաբերությամբ առաջարկությունների ծավալին, կատարվում է համամասնական տեղաբաշխում, հակառակ դեպքում բավարարվում է տվյալ սահմանային եկամտաբերությամբ մրցակցային առաջարկությունների ողջ ծավալը: Համամասնական բաշխման արդյունքում գոյացած պարտատոմսերի չբաշխվող ծավալի տեղաբաշխման համար կիրառվում է պատահական ընտրության սկզբունքը՝ ստացված պատահական թվերի գեներատորի միջոցով: Առաջարկությունների համամասնական տեղաբաշխումն իրականացվում է համաձայն ձև 7-ի:

19. Համակարգը հաշվում է տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալն ըստ տեղաբաշխման աճուրդի մասնակցի, ինչպես նաև թողարկողին փոխանցվելիք դրամական միջոցները՝ հաշվի առնելով աճուրդի մասնակցի դեպո հաշիվներում (սեփական և ամփոփ ներդրողների) տեղաբաշխման աճուրդի օրը մարման ենթակա պարտատոմսերի ծավալի առկայությունը և կատարում է դրամական ու դեպո հաշիվներին համապատասխան ծավալով դրամական միջոցների և պարտատոմսերի փոխանցումները: Հաշվարկների հիման վրա ՍիԲիԷյնեթ համակարգի միջոցով տեղաբաշխման աճուրդի անցկացման օրվա մինչև ժամը 13.00-ը հայտարարվում են աճուրդի արդյունքները՝ համաձայն ձև 1-ի, իսկ տեղաբաշխման աճուրդի մասնակիցները համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով տեղեկացվում են աճուրդին իրենց կողմից ներկայացված հայտերի վերաբերյալ:

20. Եթե սույն կարգով սահմանված ժամանակահատվածում թողարկողը չի սահմանում տեղաբաշխման աճուրդի գնային պայմանները, ապա բանկն իրավունք ունի աճուրդի անցկացման օրվա ժամը 12.30-ին աճուրդը չեղյալ հայտարարել, որի մասին տեղաբաշխման աճուրդի մասնակիցները տեղեկացվում են համապատասխան էլեկտրոնային հաղորդագրության միջոցով:

21. Տեղաբաշխման աճուրդին ներկայացվող պետական կարճաժամկետ պարտատոմսերի մրցակցային առաջարկության եկամտաբերությունը հաշվարկվում է համաձայն ձև 5-ի, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի գնման գինը՝ համաձայն ձև 6-ի:

22. Տեղաբաշխման աճուրդը նույն օրն ավելի ուշ ժամի վերսկսելու, հաջորդ աշխատանքային օր տեղափոխելու կամ չեղյալ համարելու դեպքում ավտոմատ եղանակով չեղյալ են համարվում տվյալ աճուրդի համար ընդունված հայտերը և հայտեր ներկայացնող մասնակիցները տեղեկացվում են այդ մասին համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով: Աճուրդի մասնակիցների դրամական միջոցների սահմանափակման դեպքում ավտոմատ ձևով հանվում են սահմանափակումները: Տեղաբաշխման աճուրդի վերսկսման կամ տեղափոխման մասին տեղեկանալուց հետո աճուրդի մասնակիցները ներկայացնում են նոր հայտեր՝ սույն գլխում սահմանված ընթացակարգերի համաձայն: Տեղաբաշխման աճուրդը նույն օրն ավելի ուշ ժամի վերսկսելու դեպքում հետաձգման ժամկետով հետաձգվում են նաև սույն գլխում աճուրդի ընթացակարգերին առնչվող այլ ժամկետները:

23. Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի օրը բանկը հաշվետվություններ է ներկայացնում թողարկողին՝ համաձայն ձև 2-ի, ձև 8-ի, ձև 9-ի և ձև 10-ի:

## ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԵՏԳՆՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

24. Բանկը, որպես Հայաստանի Հանրապետության Կառավարության ֆինանսական գործակալ, հիմք ընդունելով թողարկողի հետգնման աճուրդի կազմակերպման մասին հանձնա-րա-րագիրը՝ կազմակերպում է պարտատոմսերի հետգնման աճուրդ:
25. Հետգնման առարկա կարող են լինել միայն շրջանառության մեջ գտնվող ազատ կարգավիճակով պարտատոմսերը: Հետգնման աճուրդին կարող են մասնակցել միայն գործակալները:
26. Ներդրողները, այդ թվում նաև գոր-ծա-կալ չհան-դիսացող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերը (այսուհետ՝ գործակալ չհանդիսացող բանկ) հետգնման աճուրդին կարող են մասնակցել իրենց հետ պայ-մա-նա-գիր կնքած գործակալի միջոցով՝ ներկայացնելով նրան պարտատոմսերի հետգնման հայտ: Գործակալը, որը գործակալ չհանդիսացող բանկի հա-մար հետգնման աճուրդի ժամանակ վաճառել է պարտատոմսեր, պարտավոր է աճուրդի ավարտից հետո նույն օրվա ընթացքում գործակալ չհանդիսացող բանկի վաճառված պարտատոմսերի համար ստացված դրամական միջոցները փոխանցել բանկում վարվող առևտրային բանկի թղթակցային հաշվի վրա և չվաճառված պարտատոմսերը փոխանցել առևտրային բանկի պահառուի մոտ վարվող դեպո հաշվի վրա: Գործակալ չհանդիսացող բանկի հետգնման համար նախատեսված պարտատոմսերը փոխանցվում են գործակալի՝ պահառուի մոտ վարվող ամփոփ ներդրողների դեպո հաշվի վրա՝ գործակալ չհանդիսացող առևտրային բանկի և գործակալի միջև կնքված պայմանագրում սահմանված կարգով և ժամկետներում: Դիլերը ներդրողի կարգավիճակով կարող է մասնակցել հետգնման աճուրդին գործակալի միջոցով՝ համաձայն գործակալ չհանդիսացող բանկերի համար սույն գլխում սահմանված ընթացակարգերի:
27. Հետգնման աճուրդի օրվա մինչև ժամը 10.30-ը թողարկողն իր դրամական հաշվում կուտակում է հետգնման համար նախատեսված պարտատոմսերի ծավալի 140%-ին համարժեք դրամական միջոցներ: Բանկը թողարկողից ստացված կարգադրության հիման վրա սահմանափակում է թողարկողի դրամական հաշվից հետգնմանն ուղղված բյուջետային միջոցների օգտագործման հնարավորությունը:
28. Հետգնման աճուրդի օրվա մինչև ժամը 10.30-ը հետգնման աճուրդին մասնակցող գործակալները պարտավոր են բանկում վարվող ազատ պարտատոմսերին համապատասխան (սեփական, ամփոփ ներդրողների) դեպո հաշվում ունենալ հետգնման համար նախատեսվող անհրաժեշտ ծավալով պարտատոմսեր:
29. Հետգնման աճուրդի մասնակիցները ներկայացնում են պարտատոմսերի վաճառքի սույն կարգով նախատեսված երկու տեսակի հայտ:
30. Հետգնման աճուրդին ներկայացված հայտերն ընդգրկում են միայն մրցակցային առաջարկություններ, որոնցում նշվում է պարտատոմսերի այն ծավալը, որը մասնակիցը ցանկանում է վաճառել աճուրդի ժամանակ և այն եկամտաբերությունը, որով մասնակիցը պատրաստ է վաճառել պարտատոմսերի այդ ծավալը: Յուրաքանչյուր հայտ կարող է ընդգրկել առավելագույնը քսան մրցակցային առաջարկություն: Մասնակցի կողմից յուրաքանչյուր հետգնման աճուրդին ներկայացվող սեփական առաջարկությունների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել այդ օրը հետգնման ենթակա ծավալը: Մասնակցի կողմից յուրաքանչյուր հետգնման աճուրդին ներդրողների հաշվին ներ-կայաց-վող առաջարկությունների ծավալը չի սահմանափակվում: Հայտում

նշված պարտատոմսերի ծավալները պետք է բազմապատիկ լինեն տվյալ պարտատոմսի համար թողարկման հրամանում սահմանված քայլին, եկամտաբերությունը նշվում է ստորակետից հետո՝ առավելագույնը չորս նիշի ճշտությամբ:

31. Հետգնման աճուրդին հայտերը ներկայացվում են տեղաբաշխման աճուրդի համար սահմանված ժամկետներում՝ սույն կարգի 8-11 կետերում սահմանված ընթացակարգերի համաձայն:

32. Հայտերի ընդունման դադարումից հետո համակարգը ստուգում է հետգնման աճուրդի մասնակցի ազատ պարտատոմսերի դեպո հաշվում բավարար ծավալով պարտատոմսերի առկայությունը: Համապատասխան պարտատոմսերի առկայության դեպքում համակարգն ապահովում է դրանց օգտագործման սահմանափակումը հաշվետիրոջ այլ գործառնությունների համար:

33. Պարտատոմսերի բավարար ծավալով չապահովված հայտերն աճուրդից հանվում են (մերժվում են), իսկ աճուրդի մասնակիցներն այդ մասին տեղեկացվում են համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով:

34. Ընդունված (չմերժված) հայտերի հիման վրա կազմվում է հավաքական տեղեկագիր՝ համաձայն ձև 11-ի և տրամադրվում է թողարկողին:

35. Թողարկողը որոշում է պարտատոմսերի հետգնման սահմանային եկամտաբերությունը, որից հետո թողարկողի հանձնարարագրի հիման վրա, կազմված համաձայն ձև 12-ի, սույն կետով նշված պայմանները մուտքագրվում են համակարգ: Հավաքական տեղեկագրի, ինչպես նաև թողարկողի հանձնարարագրի փոխանցումը կատարվում է տեղաբաշխման աճուրդի համար սահմանված կարգով և ժամկետներում:

36. Պայմանները համակարգ մուտքագրվելուց հետո սկսվում է մրցակցային առաջարկությունների բավարարումը՝ ամենաբարձր եկամտաբերությամբ առաջարկությունից սկսած մինչև սահմանային եկամտաբերությամբ որոշված ծավալը: Սահմանային եկամտաբերությամբ առաջարկությունների բավարարումը կատարվում է կամ ողջ ծավալով կամ համամասնական սկզբունքով՝ տեղաբաշխման աճուրդի համար սահմանված ընթացակարգերին համապատասխան:

37. Համակարգը հաշվում է հետգնվող պարտատոմսերի համար վճարման ենթակա գումարներն ըստ աճուրդի յուրաքանչյուր մասնակցի, ինչպես նաև թողարկողին փոխանցվող պարտատոմսերի ծավալները և կատարում է դրամական ու դեպո հաշիվներին համապատասխան ծավալով դրամական միջոցների և պարտատոմսերի փոխանցումները: Հաշվարկների հիման վրա աճուրդի անցկացման օրվա մինչև ժամը 13.00-ը հայտարարվում են աճուրդի արդյունքները՝ համաձայն ձև 13-ի, իսկ աճուրդի մասնակիցները համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով տեղեկացվում են հետգնման աճուրդին իրենց կողմից ներկայացված հայտերի վերաբերյալ:

38. Եթե սույն կարգով սահմանված ժամանակահատվածում թողարկողը չի սահմանում աճուրդի գնային պայմանները, ապա բանկն իրավունք ունի աճուրդի անցկացման օրվա ժամը 12.30-ին աճուրդը չեղյալ հայտարարել, որի մասին աճուրդի մասնակիցները տեղեկացվում են համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով:

39. Հետգնման աճուրդին ներկայացվող պետական միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի վաճառքի գինը հաշվարկվում է համաձայն ձև 6-ի: Բոլոր գումարները հաշվարկվում են մեկ դրամի ճշտությամբ:

40. Պարտատոմսերի հետգնման աճուրդի օրը բանկը հաշվետվություններ է ներկայացնում թողարկողին համաձայն ձև 14-ի, ձև 15-ի, ձև 16-ի:

## ԳԼՈՒԽ 4. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԵՏԳՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ

41. Բանկը, հիմք ընդունելով թողարկողի կողմից ներկայացված հետգնման կազմակերպման մասին հանձնարարագիրը, կազմակերպում է պարտատոմսերի հետգնում: Հետգնման առարկա կարող են լինել միայն շրջանառության մեջ եղած ազատ կարգավիճակով պարտատոմսերը:
42. Հայաստանի Հանրապետության պետական կարճաժամկետ պարտատոմսերի հետգնմանը կարող են մասնակցել միայն պետական կարճաժամկետ պարտատոմսերի դիլերները: Հայաստանի Հանրապետության պետական միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի հետգնմանը կարող են մասնակցել միայն գործակալները: Հետգնման մասնակիցները ներկայացնում են սույն կարգով նախատեսված երկու տեսակի հայտ: Հետգնման համար կարող են ներկայացվել առաջարկություններ՝ նշելով վաճառքի ենթակա պարտատոմսերի ծավալը՝ թողարկողի կողմից նախապես հայտարարված տարեկան եկամտաբերությամբ բավարարվելու պայմանով: Ներդրողների համար գործում են սույն կարգի 26-րդ կետում սահմանված կանոնները:
43. Հետգնման օրվա մինչև ժամը 10.30-ը թողարկողն իր դրամական հաշվում կուտակում է պարտատոմսերի հետգնման համար անհրաժեշտ ծավալով դրամական միջոցներ: Բանկը թողարկողից ստացված կարգադրության հիման վրա սահմանափակում է թողարկողի դրամական հաշվից հետգնմանն ուղղված բյուջետային միջոցների օգտագործման հնարավորությունը:
44. Հետգնման օրվա մինչև ժամը 10.30-ը հետգնման մասնակիցները պարտավոր են բանկում վարվող ազատ պարտատոմսերի համապատասխան (սեփական, ամփոփ ներդրողների) դեպո հաշվում ունենալ հետգնման համար նախատեսվող անհրաժեշտ ծավալով պարտատոմսեր:
45. Հետգնման հայտերի ներկայացման, արդյունքների ամփոփման, թողարկողին հավաքական տեղեկագրի փոխանցման, հաշվարկների իրականացման և բանկի կողմից տեղեկատվության տրամադրման գործընթացը կատարվում է սույն կարգի գլուխ 3-ում սահմանված ընթացակարգերի համապատասխան, բացառությամբ 46-րդ կետում սահմանված առանձնահատկությունների:
46. Հավաքական տեղեկագիրը կազմվում է համաձայն ձև 17-ի: Թողարկողը բավարարում է հավաքական տեղեկագրում ներառված առաջարկությունների ողջ ծավալը: Հետգնմանը ներկայացվող պետական կարճաժամկետ պարտատոմսերի հետգնման(վաճառքի) գինը հաշվարկվում է համաձայն ձև 5-ի, իսկ պետական միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի վաճառքի գինը հաշվարկվում է համաձայն ձև 6-ի: Բոլոր գումարները հաշվարկվում են մեկ դրամի ճշտությամբ: Աճուրդի արդյունքները հայտարարվում են համաձայն ձև 18-ի: Պարտատոմսերի հետգնման օրը բանկը հաշվետվություններ է ներկայացնում թողարկողին համաձայն ձև 19-ի:

## ԳԼՈՒԽ 5. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

47. Պարտատոմսերի մարմանը նախորդող աշխատանքային օրը թողարկողի կողմից տրված վճարման հանձնարարականի հիման վրա բանկն իրականացնում է շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի մարում (ազատ, գրավադրված և արգելադրված):
48. Բանկը սահմանափակում է թողարկողից ստացված հանձնարարականի հիման վրա թողարկողի դրամական հաշվից մարմանն ուղղված բյուջետային միջոցների օգտագործման հնարավորությունը:
49. Եթե պարտատոմսերի մարման օրը չկա այլ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդ, ապա պահառուի կարգադրությամբ համակարգում ավտոմատ ձևով իրականացվում է մարում՝ կատարվում են դրամական և դեպո հաշիվներին համապատասխան ծավալով դրամական միջոցների և պարտատոմսերի փոխանցումները, որոնց արդյունքում շրջանառության մեջ գտնվող մարվող պարտատոմսերի ամբողջ ծավալը դեպո հաշիվներից փոխանցվում է թողարկողի մարված պարտատոմսերի դեպո հաշվին, և միաժամանակ իրականացվում են մարվող ծավալի չափով դրամական միջոցներին համապատասխան փոխանցումները:
50. Միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի պարագայում արժեկտրոնի գումարները ևս փոխանցվում են դեպո հաշվետերերի՝ բանկում վարվող համապատասխան դրամական հաշիվներին:
51. Եթե պարտատոմսերի մարման օրը կա այլ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդ, ապա մարման և աճուրդի գործառնությունները կարող են կատարվել միաժամանակ՝ հաշվանցման սկզբունքով: Համակարգը հաշվում է ըստ յուրաքանչյուր մասնակցի՝ տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալը, ինչպես նաև թողարկողին փոխանցվելիք դրամական միջոցները՝ հաշվի առնելով աճուրդի մասնակիցների դեպո հաշիվներում (գործակալի (դիլերի) դեպքում՝ տարանջատված որպես սեփական և ամփոփ ներդրողների) այդ օրը աճուրդի հետ միաժամանակ մարման ենթակա պարտատոմսերի ծավալի առկայությունը և կատարում է դեպո և դրամական հաշիվներին անհրաժեշտ փոխանցումներ:
52. Պարտատոմսերի մարման ժամանակ թողարկողի դեպո հաշիվներում առկա տեղաբաշխման ենթակա և հետ գնված պարտատոմսերը նույնպես փոխանցվում են թողարկողի մարված պարտատոմսերի դեպո հաշվին:
53. Եթե պարտատոմսերի մարման օրը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարումն իրականացվում է առաջիկա աշխատանքային օրը:

## ԳԼՈՒԽ 6. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

54. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի թողարկման պայմանները, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանները, Հայաստանի

Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանները, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմաններն ու Հայաստանի Հանարպետության պետական (գանձապետական) երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը հաստատելու մասին» թիվ 1103 Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի  թողարկման պայմաններ»-ի համաձայն թողարկված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի հետգնումն իրականացվում է սույն կարգի 4-րդ գլխի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի գործակալների մասնակցությամբ, պարտատոմսերի վաճառքի գինը հաշվարկելով՝ համաձայն սույն կարգի ձև 20-ի: Այդ պարտատոմսերի մարումը և արժեկտրոնների վճարումն իրականացվում է սույն կարգի 5-րդ գլխի համաձայն:

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման
կազմակերպման և մարման սպասարկման կարգի
Ձև 1

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____ թողարկման պարտատոմսերի աճուրդի արդյունքների վերաբերյալ

թողարկման համարը

- Աճուրդի անցկացման հասցեն և ամսաթիվը,
- աճուրդին մասնակցած գործակալների քանակը,
- աճուրդին մասնակցած դիլերների քանակը,
- ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- գործակալների կողմից ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունների ծավալը,
- գանձապետական պահառուի կողմից ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունների ծավալը,
- բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- տեղաբաշխված պարտատոմսերի սահմանային եկամտաբերությունը,
- տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման
կազմակերպման և մարման սպասարկման կարգի
Ձև 2

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

_____ թողարկման պարտատոմսերի աճուրդի արդյունքների վերաբերյալ

թողարկման համարը

- Աճուրդի անցկացման հասցեն և ամսաթիվը,
- աճուրդին մասնակցած գործակալների քանակը,
- աճուրդին մասնակցած դիլերների քանակը,
- ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունների ծավալը,
- բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- տեղաբաշխված պարտատոմսերի սահմանային եկամտաբերությունը,
- տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման
կազմակերպման և մարման սպասարկման կարգի
Ձև 3

_____ թողարկման
թողարկման համարը

պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին
թույլատրված հայտերի հավաքական տեղեկագիր

| Պարտատոմսերի ձեռք-բերման մրցակցային առաջարկությունների ծավալը (դրամ) | Նշված ծավալի դիմաց առաջարկվող գումարը (դրամ) | Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը (%) |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

| | |
|---|---|
| Պարտատոմսերի տեղաբաշխման ենթակա ծավալը | |
| Պարտատոմսերի թողարկման ամսաթիվը | |
| Պարտատոմսերի մարման ամսաթիվը | |
| Պարտատոմսերի ձեռքբերման (պահանջվող) ընդհանուր ծավալը | |
| Պարտատոմսերի տեղաբաշխվող (բավարարվող) ընդհանուր ծավալը | |
| Պարտատոմսերի սահմանային տարեկան եկամտաբերությունը | |
| Պարտատոմսերի միջին կշռված տարեկան եկամտաբերությունը | |
| Պարտատոմսերի շրջանառության ժամկետը | |
| Մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը | |
| Գործակալների սեփական մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը | |
| Դիլերների սեփական մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը | |
| Գործակալների և դիլերների ներդրողների մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը | |
| Ոչ մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը | |
| Գանձապետական պահառուի ծավալը | |
| Գործակալների սեփական ոչ մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը | |
| Ներդրողների ոչ մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը | |

Աշխատանքային խմբի անդամներ՝ 1. _____
2. _____

«___»_____ թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

«_»_____200 թ. աճուրդի ընթացքում
_____ թողարկման պարտատոմսերի
թողարկման համարը
գնման հայտերի բավարարման համար

Սույնով թողարկողը բանկին հանձնարարում է.

- վաճառել _____ պարտատոմսերն այն անձանց, որոնք ներկայացրել են
թողարկման համարը
այդ պարտատոմսերի գնման մրցակցային առաջարկություններ, և հայտերում նշված եկամտաբերությունը _____% բարձր չէ,

- մերժել մյուս բոլոր մրցունակ առաջարկությունները,

- վաճառել _____ պարտատոմսերն այն անձանց, որոնք ներկայացրել են
թողարկման համարը
այդ պարտատոմսերի գնման ոչ մրցակցային առաջարկությունները, աճուրդի միջին կշռված եկամտաբերությամբ՝_____%:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից
(Ա.Ա.Հ.)

_____

_____

Հանձնարարագիրն ստացվել է «__»_____200 թ. ժամը _____

ՀՀ կենտրոնական բանկի կողմից (Ա.Ա.Հ.)

ՀՀ պետական պարտատոմսերի
առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգի
Ձև 5

**ԲԱՆԱՁԵՎ**

**Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի տարեկան եկամտաբերության հաշվարկման**

***ԵԿ =***

**ԲԱՆԱՁԵՎ**

**Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի գնի (ձեռքբերման գնի/վաճառքի գնի) հաշվարկման**

**ԳԳ =**

որտեղ՝

ԵԿ - տարեկան եկամտաբերություն
ԱԱ- պարտատոմսի անվանական արժեք,

ԳԳ- պարտատոմսի գնման(վաճառքի) գին,

Օ- մինչև մարում օրերի քանակը,

360- տարվա օրերի թիվը՝ ընդունված պայմանականորեն:

**ԳԳ ≤ ԱԱ**

# ՔԱՆԱՁԵՎ

## ՀՀ պետական(գանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի գնի (ձեռքբերման գնի/վաճառքի գնի) հաշվարկման

**ԳԳ =** ,

որտեղ՝

ԳԳ- պարտատոմսի գնման(վաճառքի) գին,
տ - արժեկտրոնի փուլային եկամտաբերություն,
Ա- պարտատոմսի անվանական արժեքը,
a - մինչև առաջիկա արժեկտրոնի վճարումը մնացած փաստացի օրերի թիվը,
b- փուլի տևողությունը օրերով
m- այդ պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը
եկ-փուլային եկամտաբերություն

տ =

եկ =

S -արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն
k - արժեկտրոնների վճարումների թիվը
ԵԿ -տարեկան եկամտաբերություն

*Բանաձևում արժեկտրոնի  փուլային եկամտաբերությունները կլորացվում են ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ:*

Համամասնության բաշխման սկզբունքը

Հաշվարկվում են A մեծության հետևյալ արժեքները՝

$A = Cs-\sum R$

$A = Vncs-\sum R$

Cs – հավաքական տեղեկագրի n-րդ սահմանային տողի բավարարվող ծավալն է
Vncs - Աճուրդի մասնակիցների համար ոչ մրցակցային առաջարկություններով ձեռքբերման բավարարվող առավելագույն ծավալն է

Եթե A=0, ապա կլորացված R ծավալները բաշխվում են առանց մնացորդի:

Եթե A<0, ապա պատահական թվերի գեներատորի (ՊԹԳ-ի) միջոցով ընտրվում են աճուրդի մասնակիցների այն առաջարկությունները, որոնց R ծավալները կնվազեն քայլի չափով:

Եթե A>0, ապա ՊԹԳ-ի միջոցով ընտրվում են մասնակիցների այն առաջարկությունները, որոնց R ծավալները կավելանան քայլի չափով:

Օրինակ՝
A1, A2, A3 և A4 աճուրդի մասնակիցները ներկայացրել են պարտատոմսերի ձեռքբերման համապատասխանաբար V1, V2, V3 և V4 պահանջվող ծավալների ոչ մրցակցային առաջարկություններ, V-ն ոչ մրցակցային առաջարկություններով տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի առավելագույն ծավալն է, որը պետք է համամասնորեն բաշխվի A1, A2, A3, A4 աճուրդի մասնակիցների միջև՝ V<(V1+V2+V3+V4):

ա) Ենթադրենք, շրջանառության ժամկետը 28 օր է, V=500՝000AMD, միջին կշռված եկամտաբերությունը 46.6321%, քայլը՝ 1000AMD

| № | Պահանջվող ծավալ | Եկամտաբե-րություն | Բավարարվող ծավալ | Բավարարված ծավալը՝ քայլի ճշտությամբ | Վճարվող գումարը (հաշվարկվում է համաձայն 3-րդ կետում բերված բանաձևի) մեկ դրամի ճշտությամբ |
|---|---|---|---|---|---|
| A1 | 70՝000 | 46.6321 | 42՝682.93 | 43000 | 41՝495 |
| A 2 | 150՝000 | 46.6321 | 91՝463.41 | 91000 | 87՝815 |
| A3 | 200՝000 | 46.6321 | 121՝951.20 | 122000 | 117՝730 |
| A4 | 400՝000 | 46.6321 | 243՝902.40 | 244000 | 235՝460 |
| Ընդ. | 820՝000 | | | 500՝000 | |

բ) Ենթադրենք V=98000AMD

| № | Պահանջվող ծավալ | Եկամտաբե-րություն | Բավարարվող ծավալ | Բավարարվող ծավալը՝ քայլի ճշտությամբ | Բավարարված ծավալը՝ պատահական թվերի գեներատորի կիրառմամբ |
|---|---|---|---|---|---|
| A1 | 200՝000 | 46.6321 | 24500 | 25000 | 24000* |
| A2 | 200՝000 | 46.6321 | 24500 | 25000 | 25000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| A3 | 200`000 | 46.6321 | 24500 | 25000 | 24000* |
| A4 | 200`000 | 46.6321 | 24500 | 25000 | 25000 |
| Ընդ. | 800`000 | | 98000 | 100`000 | 98000 |

* - ՊԹԳ-ի միջոցով ընտրվել են 1-ին և 3-րդ աճուրդի մասնակիցների առաջարկությունները,
որոնց մասնակիորեն բավարարված ծավալները պակասեցվել են 1000 դրամով՝ բավարարված ընդհանուր ծավալը V-ին համապատասխանեցնելու համար

գ) Ենթադրենք, V=385000AMD

| № | Պահանջվող ծավալ | Եկամտաբե-րություն | Բավարարվող ծավալ | Բավարարվող ծավալը՝ քայլի ճշտությամբ | Բավարարված ծավալը՝ պատահական թվերի գեներատորի կիրառմամբ |
|---|---|---|---|---|---|
| A1 | 100`000 | 46.6321 | 96250 | 96000 | 96000 |
| A2 | 100`000 | 46.6321 | 96250 | 96000 | 97000* |
| A3 | 100`000 | 46.6321 | 96250 | 96000 | 96000 |
| A4 | 100`000 | 46.6321 | 96250 | 96000 | 96000 |
| Ընդ. | 400`000 | | 385000 | 384000 | 385000 |

* - ՊԹԳ-ի միջոցով ընտրվել է 2-րդ աճուրդի մասնակցի առաջարկությունը, որի մասնակիորեն բավարարված ծավալը ավելացվել է 1000 դրամով՝ բավարարված ընդհանուր ծավալը V-ին համապատասխանեցնելու համար:

Եթե պարտատոմսերի ծավալների դիմաց յուրաքանչյուր մասնակցի գծով վճարվող գումարների հաշվարկները տեխնիկական և/կամ համակարգչային այլ միջոցներով իրականացնելիս ստացված արդյունքները տարբերվում են համակարգի միջոցով հաշվարկված տվյալներից մինչև 1000 դրամով, ապա համակարգի կողմից հաշվարկները համարվում են ճիշտ:

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման
կազմակերպման և մարման սպասարկման կարգի

Ձև 8

ՀՀ կենտրոնական բանկ, արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգ R001

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## Պարտատոմսերի (ո-րդ) աճուրդի արդյունքների վերաբերյալ

Սույն բանկը տեղեկացվում է պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքների մասին

1. Թողարկման տեղաբաշխման աճուրդը կայացել է

Պարտատոմսերը կմարվեն

| | Աճուրդի մասնակիցների քանակը | Ներկայացված ծավալները (դրամ) |
|---|---|---|
| Դիլեր | | |
| Գործակալ | | |
| Գանձապետական պահառու | | |
| Ընդամենը | | |

2. Աճուրդի ընթացքում պարտատոմսերի ձեռքբերման բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը կազմել է `

3. Թողարկողի կողմից սահմանվել է մրցակցային առաջարկությունների բավարարման առավելագույն եկամտաբերությունը`

4.Պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված հասույթը կազմել է՝

5.Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի ընթացքում մասնակիցների կողմից ձեռք բերված պարտատոմսերը կազմել են՝

| Աճուրդի մասնակցի անվանումը | Ձեռք է բերվել մրցակցային առաջարկություններով | Ձեռք է բերվել ոչ մրցակցային առաջարկություններով |
|---|---|---|
| | Ծավալը (ՀՀդրամ) | Վճարված գումարը (ՀՀդրամ )Ծավալը (ՀՀ դրամ)Վճարված գումարը (դրամ) |
| | | |

6.Հասույթը հաշվեգրվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության

հաշվին «_____» _____200 թ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից

_____ _____
(ստորագրություն) (Ա.Հ.Ա)

Հաշվետվությունն ընդունվել է «_____» _____200 թ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

_____ _____
(ստորագրություն) (Ա.Հ.Ա)

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգի
Ձև 9

ՀՀ կենտրոնական բանկ, արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգ R003

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____արժեթղթերի առաջնային տեղաբաշխման (ո-րդ)_____
օր/ամիս/տարի

աճուրդի արդյունքների վերաբերյալ

| Աճուրդի մասնակցի անվանումը | Արժեթղթերի ներկայացված ծավալը | Արժեթղթերի բավարարված ծավալը | Տարեկան եկամտաբերությունը | Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| | | | | |
| Մրցակցային առաջարկություններ | | | | |
| | | | | |
| Ընդամենը՝ | | | | |
| | | | | |
| Ոչ Մրցակցային առաջարկություններ | | | | |
| | | | | |
| Ընդամենը՝ | | | | |

NCM չբավարարված մրցակցային առաջարկություն

SCM բավարարված մրցակցային առաջարկություն

SCP մասնակիորեն բավարարված մրցակցային առաջարկություն

SNC բավարարված ոչ մրցակցային առաջարկություն

SNP մասնակիորեն բավարարված ոչ մրցակցային առաջարկություն

Կազմվել է օր/ամիս/տարի ժամ:րոպե:վայրկյան

ՀՀ կենտրոնական բանկ, արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգ
R004

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____միևչև _____ ժամանակահատվածում
*(օրը, ամիսը, ամսաթիվը)* *(օրը, ամիսը, ամսաթիվը)*

արժեթղթերի առաջնային տեղաբաշխման արդյունքների վերաբերյալ

| | |
|---|---|
| Արժեթղթերի պետական գրանցման համարը | |
| Արժեթղթերի թողարկման ամսաթիվը | |
| Արժեթղթերի ածուրդի հերթական համարը և ամսաթիվը | |
| Արժեթղթերի տեղաբաշխման ենթակա ծավալը | |
| Արժեթղթերի պահանջարկի ծավալը | ՀՀ դրամ |
| | %-ով՝ տեղաբաշխված ծավալի նկատմամբ |
| Արժեթղթերի ձեռքբերման մրցակցային առաջարկությունների տարեկան եկամտաբերությունը (%) | min |
| | max |
| | սահմանային |
| Արժեթղթերի տեղաբաշխումից ստացված գումարը (ՀՀ դրամ) | |
| Տեղաբաշխված արժեթղթերի ծավալը (ՀՀ դրամ) | Գործակալների սեփականՄրց ակցային |
| | Ոչ մրցակցային |
| | Դիլերների սեփականՄրց ակցային |
| | Ոչ մրցակցային |
| | Գործակալների ներդրողներՄր ցակցային |
| | Ոչ մրցակցային |
| | Դիլերների ներդրողներՄր ցակցային |
| | Ոչ մրցակցային |

| | |
|---|---|
| | Գանձապետական պահառու |
| | Ընդամենը |
| Արժեթղթերի միջին կշռված տարեկան եկամտաբերությունը (%) | |

*Կազմվել է օր/ամիս/տարի ժամ:րոպե:վայրկյան*

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման
կազմակերպման և մարման սպասարկման կարգի
Ձև 11

_____ թողարկման
թողարկման համարը
պարտատոմսերի _____հետգնման աճուրդին
օր/ամիս/տարի
թույլատրված հայտերի հավաքական տեղեկագիր

| Պարտատոմսերի վաճառքի մրցակցային առաջարկությունների ծավալը (դրամ) | Նշված ծավալի դիմաց վճարման ենթակա գումարը (դրամ) | Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը (%) |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

| | |
|---|---|
| Պարտատոմսերի հետգնման ենթակա ծավալը | |
| Պարտատոմսերի հետգնման աճուրդի ամսաթիվը | |
| Պարտատոմսերի մարման ամսաթիվը | |
| Վաճառքի ենթակա պարտատոմսերի առաջարկի ընդհանուր ծավալը | |
| Հետգնված պարտատոմսերի ընդհանուր ծավալը | |
| Պարտատոմսերի սահմանային տարեկան եկամտաբերությունը | |
| Պարտատոմսերի միջին կշռված տարեկան եկամտաբերությունը | |
| Պարտատոմսերի շրջանառության ժամկետը | |
| Գործակալների սեփական մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը | |
| Գործակալների ներդրողների մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը | |

Աշխատանքային խմբի անդամներ՝ 1. _____
2. _____

*«___»_____ թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

«_»_____200 թ. հետգնման աճուրդի ընթացքում
_____ թողարկման պարտատոմսերի
թողարկման համարը
հետգնման հայտերի բավարարման համար

Սույնով թողարկողը բանկին հանձնարարում է.

- գնել _____ պարտատոմսերն այն անձանցից, որոնք _____
թողարկման համարը

ներկայացրել են այդ պարտատոմսերի գնման մրցակցային առաջարկություններ, և հայտերում նշված եկամտաբերությունը _____% ցածր չէ,

- մերժել մյուս բոլոր մրցունակ առաջարկությունները:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից
(Ա.Ա.Հ.)

---

Հանձնարարագիրն ստացվել է «__»_____200 թ. ժամը _____

ՀՀ կենտրոնական բանկի կողմից (Ա.Ա.Հ.)

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման
կազմակերպման և մարման սպասարկման կարգի
Ձև 13

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____ թողարկման պարտատոմսերի հետգնման աճուրդի արդյունքների վերաբերյալ

թողարկման համարը

- Հետգնման աճուրդի անցկացման հասցեն և ամսաթիվը,
- հետգնման աճուրդին մասնակցած գործակալների քանակը,
- ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- հետգնված պարտատոմսերի սահմանային տարեկան եկամտաբերությունը:

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման
կազմակերպման և մարման սպասարկման կարգի
Ձև 14

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

_____ թողարկման պարտատոմսերի հետգնման աճուրդի արդյունքների վերաբերյալ

թողարկման համարը

- Հետգնման աճուրդի անցկացման հասցեն և ամսաթիվը,
- հետգնման աճուրդին մասնակցած գործակալների քանակը,
- ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- հետգնված պարտատոմսերի սահմանային տարեկան եկամտաբերությունը
- հետգնված պարտատոմսերի միջին կշռված տարեկան եկամտաբերությունը:

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման
կազմակերպման և մարման սպասարկման կարգի
Ձև 15

ՀՀ կենտրոնական բանկ, արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգ

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____ Պարտատոմսերի հետգնման աճուրդի արդյունքների վերաբերյալ

Սույնով բանկը տեղեկացնում է պարտատոմսերի հետգնման աճուրդի արդյունքների մասին

1. Հետգնման աճուրդը կայացել է

Աճուրդի մասնակիցների քանակը

Թողարկողի կողմից հայտարարված պարտատոմսերի հետգնման ծավալը

Մասնակիցների կողմից ներկայացված ծավալները (դրամ)

2. Աճուրդի ընթացքում պարտատոմսերի վաճառքի բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը կազմել է՝

3. Թողարկողի կողմից սահմանվել է մրցակցային առաջարկությունների բավարարման սահմանային եկամտաբերությունը՝

4.Պարտատոմսերի հետգնման արդյունքում մասնակիցներին վճարված գումարը կազմել է՝

5.Պարտատոմսերի հետգնման աճուրդի ընթացքում մասնակիցների կողմից վաճառված պարտատոմսերը կազմել են՝

| Աճուրդի մասնակցի անվանումը | Վաճառվել է մրցակցային առաջարկություններով |
|---|---|
| | Ծավալը (դրամ)<br>Վճարված գումարը |
| | |
| | |
| | |

6. Վճարված գումարը ելքագրվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության

հաշվից «_____» _____200 թ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից

_____ _____
(ստորագրություն) (Ա.Հ.Ա)

Հաշվետվությունն ընդունվել է «_____» _____200 թ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

_____ _____
(ստորագրություն) (Ա.Հ.Ա)

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման
կազմակերպման և մարման սպասարկման կարգի
Ձև 16

ՀՀ կենտրոնական բանկ, արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգ

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____ թողարկման պարտատոմսերի

_____հետգնման աճուրդի արդյունքների վերաբերյալ
օր/ամիս/տարի

| Աճուրդի մասնակցի անվանումը | Արժեթղթերի ներկայացված ծավալը | Արժեթղթերի բավարարված ծավալը | Տարեկան եկամտաբ. | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը՝ | | | | |

NCM չբավարարված մրցակցային առաջարկություն

SCM բավարարված մրցակցային առաջարկություն

SCP մասնակիորեն բավարարված մրցակցային առաջարկություն

Կազմվել է օր/ամիս/տարի ժամ:րոպե:վայրկյան

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման
կազմակերպման և մարման սպասարկման կարգի
Ձև 17
R503

_____ թողարկման
թողարկման համարը
պետական պարտատոմսերի _____հետգնմանը
օր/ամիս/տարի
ներկայացված հայտերի հավաքական տեղեկագիր

Ներկայացված հայտեր

| Պարտատոմսերի ծավալը (դրամ) | Պարտատոմսերի հետգնման գինը (դրամ) | Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը (%) |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| Ընդամենը՝ | | |
| | | |

Աշխատանքային խմբի անդամներ՝ 1. _____
2. _____

*«___» _____ թ.*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____Պարտատոմսերի հետգնման արդյունքների վերաբերյալ

պարտատոմսերի թողարկման համարը

- Հետգնման անցկացման հասցեն և ամսաթիվը,
- հետգնման մասնակիցների (գործակալների/դիլերների) քանակը,
- ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- հետգնված պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը:

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման
կազմակերպման և մարման սպասարկման կարգի
Ձև 19
R502

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____ թողարկման պետական պարտատոմսերի հետգնման
վերաբերյալ

Սույնով բանկը տեղեկացնում է _____ թողարկման պարտատոմսերի հետգնման արդյունքների մասին

1. Թողարկման հետգնումը կայացել է

2. Թողարկողի կողմից սահմանվել է հայտերի բավարարման _____% եկամտաբերություն

3. Հետգնմանը մասնակցել են _____ գործակալ/դիլեր

4. Ընդունվել են պարտատոմսերի հետգնման հայտեր՝ _____ դրամ անվանական արժեքով՝

5.Պարտատոմսերի հետգնման արդյունքում հանրապետության բյուջեից ուղղվել է _____ դրամ գումար

6. _____ թողարկման պարտատոմսերի հետգնման արդյունքում գործակալների/դիլերների կողմից վերադարձված պարտատոմսերը կազմել են՝

| մասնակցի անվանումը | Անվանական արժեքը (դրամ) | մասնակցին վճարված գումարը (դրամ) |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

7. Վճարված գումարը ելքագրվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության

հաշվից «_____» _____200 թ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից

_____ _____
(ստորագրություն) (Ա.Հ.Ա)

Հաշվետվությունն ընդունվել է «_____» _____200 թ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

_____ _____
(ստորագրություն) (Ա.Հ.Ա)

# ԲԱՆԱՁԵՎ

## Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի գնի (ձեռքբերման գնի/վաճառքի գնի) հաշվարկման

$$ԳԳ = Ա/m * \sum_{j=1}^{m} \frac{(տ*(m-j+1)/100) + 1}{(1+եկ*a/(100*b) * (1+եկ/100)^{j-1}}$$

որտեղ՝ ԳԳ- պարտատոմսի գնման/վաճառքի գին,
տ - արժեկտրոնի փուլային եկամտաբերություն,
Ա- գործարքի պահին պարտատոմսի անվանական արժեքը,
b- տվյալ փուլի փաստացի տևողությունն օրերով,
a - մինչև առաջիկա մարում օրերի թիվը,
m- այդ պահին մնացած մասնակի մարումների (արժեկտրոնների վճարումների) թիվը,
եկ-փուլի եկամտաբերություն,

որտեղ՝ $տ = ((1+S/100)1/k - 1) * 100$ ;

$եկ = ((1 + ԵԿ/100) 1/k - 1) * 100$

S - արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն,
ԵԿ - տարեկան եկամտաբերություն,
k - մեկ տարում մասնակի մարումների և արժեկտրոնների վճարումների թիվը:

*Բանաձևում արժեկտրոնի և պարտատոմսերի փուլային եկամտաբերությունները կլորացվում են չորս նիշի ճշտությամբ:*